ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 58

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.11.2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ավագանու 13.11.2017թվականի թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղական համայնքի 2017թ տեղական բյուջեի ինն ամսվա կատարողականի մասին /Զեկ. Փ. Դանիելյանը/
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղական համայնքի 2018թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին /Զեկ. Փ. Դանիելյանը/

3. Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղական համայնքի 217 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին /Զեկ.՝ Փ. Դանիելյանը/

Հարցման կարգով լսված հարցեր

1. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքների դրամական օգնություն տրամադրելու մասին /06.10.2017թ, 24.10.2017թ, 06.11.2017թ/ Զեկ՝ Կ. Մարգարյանը

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

Համայնքի ղեկավար՝ **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 59-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Համայնքի 2017թ տեղական բյուջեի ինն ամսվա կատարումն ընթացել է հետևյալ ցուցանիշներով՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Համայնքի բյուջեի 2017թ-ի ինն ամսներ ընթացքում կատարրվել է 103.2%-ով, պլանով նախատեսված 83107.5 հազար դրամ, փաստացի կատարավել է 85778.5 հազար դրամ, պլանը գերակատարվել է 0.03%ով, այսինքն 2671.0 հազար դրամով: Նույն ժամանակահատվածի համեմատ 2016թ-ի պլանը կատարվել է 97.9%ով:

Համաայնքի բյուջեի 2017թ-ի ինն ամիսներիընթացքում սեփական եկամուտները կատարվել են 121.1%-ով, այսինքն պլանով նախատեսված 12999.5 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 15736.9 հազար դրամ, պլանը գերակատրվել է 21.1 %-ով, այսինքն 2737.4 հազար դրամ: 2016թ-ի նույն ժամանակահատվածում կատարվել է 87.7 %-ով:

Ըստ առանձին հարկատեսակների 2016-2017թթ համեմատ

եկամտի տեսակը	տարեկան հաստատված պլան/հզ.դր		փաստացի /հզ.դր./		կատարողական %	
	2017	2016	2017	2016	2017	2016
Գույքահարկ համայնքի շենք շինություններ	197.6	197.6	17.1	20.8	8.7	10.5
Հողի հարկ	6035.2	5848.1	4200.7	3215.3	69.6	55.0
Գույքահարկ փոխադրամիջոց.	3934.1	3206.3	7644.3	7244.1	194.3	225.9

տեղական տուրք	225.0	225.0	84.0	106.7	37.3	47.4
ոչ հարկային եկամուտներ	2599.9	2997.5	3790.8	360.9	145.8	12.1
Ծառայություններ և այլ պարտադիր վճարներ	7.7	7.5	-	-	-	-
սեփական եկամուտներ	12999.5	12482.0	15536.9	10947.8	119.5	87.7
պաշտոնական դրամաշնորհներ	70108.1	65320.4	70041.6	65207.0	99.9	99.8
Ընդամենը	83107.6	77802.4	85578.5	76154.8	103.0	97.9

Վարչական բյուջեի եկամուտների թերակատարումը կապված է հողի հարկի, համայնքում շենք-շինությունների, տեղական տուրքերի և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարներըից:Եկամուտների կատարման մակարդակից ելնելով 2017թ-ի ինն ամսվա ծախսերը կատարվել են՝

Ծախսերի անվանումը	Տարեկան հաստատված պլան		փաստացի /հազ.դր./		Կատարողական %	
	2017	2016	2017	2016	2017	2016
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	43110.0	13203.0	34490.2	36956.8	80.0	85.5
Տնտեսական հարաբերություններ	7762.5	1792.5	4400.0	1163.8	56.7	64.9
Շրջակա միջավայրի պաշտպանություն	2460.0	2250.0	2094.5	2050.0	85.1	91.1
Բնակարան. շինարարութ և կոմունալ ծառայություն	1500.0	1575.0	800.0	1400.0	53.3	88.9
Պաշտպանություն	90.0	90.0	-	-	-	-
Առողջապահություն	75.0	150.0	-	100.0	-	66.7
Հանգիստ, մշակույթ և սպորտ	5857.5	5998.9	4842.3	4496.2	82.7	75.0
Կրթություն	11010.0	14925.0	10565.9	1500.0	96.0	103.9
Սոցիալական պաշտպանություն	7305.0	7050.0	7159.0	6785.0	98.0	96.2
Հիմնական դասին չպատկանող	3935.5	783.0	-	-	-	-

պահուստային ֆոնդ						
Ընդամենը	83107.5	77802.3	64352.0	68451.7	77.4	88.0

Ոչ Ֆինանսկան ակտիվների գծով

Ծախսերի անվանումը	Տարեկան հաստատված պլան /հազ. դր/		Փաստացի կատարված/ հազ.դր./		կատարողական %	
	2017	2016	2017	2016	2017	2016
Շենքև շինություններ,	17200.0	13495.4	5659.7	6235.1	32.9	46.2
որից՝						
Շենք շինությունների կառուցում	4600.0	-	-	-	-	-
շենք շինություն. կապիտալ	1200.0	13495.4	5659.7	6235.1	46.4	46.2
վերանորոգում						
վարչական սարքավորում	1500.0	2000.0	201.0	1647.6	13.4	82.4
այլ հիմնական միջոցներ	1332.2	780.0	363.0	600.0	27.3	76.9
Ընդամենը	20032.2	16275.4	6223.7	8482.7	31.1	52.1

Ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 92-րդ հոդվածի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի 2017թ տեղական բյուջեի ինն ամսվա կատարման մասին հաղորդագրությունը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

Համայնքի ղեկավար՝ **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

ՈՐՈՇՈՒՄ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 60-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 18 կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 4-րդ կետի և 14-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 46 հոդվածի 2-րդ կետի և 71 հոդվածի 1 կետի 1 ենթակետի պահանջներով. ավագանին որոշում է՝

Հաստատել 2018թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ հիմնական շենքերի ու շինությունների համար

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի ոփւ շինությունների համար՝ 15000 դրամ:

բ/ սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝30000 դրամ,

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 50000 դրամ,

1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար մինչև 50000 դրամ

3000 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մինչև 100000 դրամ,

գ/ ոչ հիմնական շենքերի ու շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի ու շինությունների համար՝ 3000 դրամ

20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի ու շինությունների համար 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար 5000 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թուլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ

բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10050 դրամ գ. 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13050 դրամ

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20050 դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ

բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10050 դրամ գ. 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13050 դրամ

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20050 դրամ

4. Համայնքի տարածքում՝

1/ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

2/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ 100000 դրամ:

3/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվությանհամար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 20000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

2/ դատարկ գովազդային վահանակի համար՝ համայնքի վարչական տարաքծքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 % -ի չափով:

7. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ

8.Համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ:

2/ ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի հատուցման համար՝ մասնակիցների վճար 1000 դրամ:

9. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 23.03.2017թ թիվ 23-Ն որոշումը;

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

Համայնքի ղեկավար՝ **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 61-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5)-րդ ենթակետով, 83-րդ հոդվածի 2-րդ և 88-րդ հոդվածի 1-ին, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետերով, ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

Համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Համայնքի վարչական բյուջեի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում բաժին 01 խումբ 1 դաս 1 ծրագիր 5 աշխատողներին աշխատավարձ և հավելավճարներ հոդված 4111-ից 2800.0 հազար դրամ, ներքին գործուղումներ հոդված 4221-ից 250.0 հազար դրամ, շենքեր և շինությունների ընթացիկ նորոգում հոդված 4251-ից 130.0 հազար դրամ, հատուկ նպատակային նյութեր հոդված 4269-ից 200. հազար դրամ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51 աշխատավարձ հոդված 4111-ից 600.0 հազար դրամ, գյուղատնտեսություն բաժին 04 խումբ 2 դաս 1 ծրագիր 51 մասնագիտական ծառայություն 4241-ից 200.0 հազար դրամ, գյուղ. ապրանքներ հոդված 4262-ից 400.0 հազար դրամ, տրանսպորտ բաժին 04 խումբ 5 դաս 1 ծրագիր 51 շենքեր և կառույցների ընթացիկ նորոգում հոդված 4251-ից 500.0 հազար դրամ, արտահիվանդանոցային ծառայություն բաժին 07 խումբ 2 դաս 1 ծրագիր 51 սուբսիդիա Լճաշենի ԱԱՊԿ-ՓԲԸ-ին հոդված 4511-ից 100.0 հազար դրամ, հանգիստ և սպորտի ծառայություն բաժին 08 խումբ 1 դաս 1 ծրագիր 51 մասնագիտական ծառայություն հոդված 4241-ից 200.0 հազար դրամ, միջնակարգ ընդհանուր կրթություն բաժին 09 խումբ 2 դաս 2 ծրագիր 51 սուբսիդիա դպրոցին հոդված 4511-ին 100.0

հազար դրամ, համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի բաժին 11 խումբ 1 դաս 2 ծրագիր 51 պահուստային ֆոնդ հոդված 4891-ից 1300.0 հազար դրամ պակասեցնել և ավելացնել օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում բաժին 01 խումբ 1 դաս 1 ծրագիր 5 էներգետիկ ծախսեր հոդված 4212-ին 300.0 հազար դրամ և հաստատել 2100.0 հազար դրամ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51 տեղեկատվական ծառայություն հոդված 4234-ին 230.0 հազար դրամ, և հաստատել 730.0 հազար դրամ, կենցաղային և հանրային սննդի ձեռք բերում հոդված 4267-ին 300.0 հազար դրամ և հաստատել 900.0 հազար դրամ, հատուկ նպատակային նյութեր հոդված 4269-ին 1250.0 հազար դրամ և հաստատել 3050.0 հազար դրամ, շենք շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում հոդված 4251 900.0 հազար դրամ և հաստատել 900.0 հազար դրամ, փողոցային լուսավորություն բաժին 06 խումբ 4 դաս 1 ծրագիր 51 էներգետիկ ծառայություն հոդված 4212-ին 300.0 հազար դրամ և հաստատել 1600.0 հազար դրամ, հանգիստ և սպորտի ծառայություն բաժին 08 խումբ 1 դաս 1 ծրագիր 51 հատուկ նպատակային նյութեր հոդված 4269-ին 300.0 հազար դրամ և հաստատել 1815.0 հազար դրամ, մշակույթի տներ և ակումբներ կենտրոններ բաժին 08 խումբ 2 դաս 3 ծրագիր 51 էներգետիկ ծառայություն հոդված 4212-ին 300.0 հազար դրամ և հաստատել 1300.0 հազար դրամ, հատուկ նպատակային նյութեր հոդված 4269-ին 500.0 հազար դրամ և հաստատել 1750.0 հազար դրամ, արտադպրոցական դաստիարակություն բաժին 09 խումբ 5 դաս 1 ծրագիր 51 սուբսիդիա ոչ ֆինանսկան պետական, համայնքային կազմակերպություններ հոդված 4511-ին 1500.0 հազար դրամ և հաստատել 11600.0 հազար դրամ, գործազրկություն բաժին 10 խումբ 3 դաս 1 ծրագիր 55 հուղարկավորության նպաստ հոդված 4726-ին 400.0 հազար դրամ և հաստատել 3000.0 հազար դրամ, գործազրկություն բաժին 10 խումբ 4 դաս 1 ծրագիր 51 մայրության նպաստ հոդված 4722-ին 300.0 հազար դրամ և հաստատել 1440.0 հազար դրամ, սոցիալապես անապահով անձանց աջակցություն /այլ դասին չպատկանող/ բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 54 այլ նպաստներ բյուջեից հոդված 4729-ին 200.0 հազար դրամ և հաստատել 6200.0 հազար դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

Համայնքի ղեկավար՝ **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 62

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 6-րդ հոդվածի, 28-րդ հոդվածի II բաժնի 1-ին կետի զ ենթակետի , <<Սոցիալական աջակցության մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետի , 18-րդ հոդվածի 4-րդ կետի, և հիմք ընդունելով համայնքի ավագանու կանոնակարգը 24-րդ կետի, ավագանու 20.01.2017թ թիվ 4-Նորոշման դրույթները, համայնքի ավագանին որոշում է՝

Բավարարել Լճաշեն գյուղի բնակիչներ Սարիբեկյան Արմինեի, Պետրոսյան Համասփյուռի, Իգնաթևոսյան Վազգենի, Հարությունյան Անուշակայի, Ղազարյան Ալեքսանի, Պետրոսյան Նորայրի, Սիմոնյան Ռուբիկի, Սանամյան Յուրիկի, Մաթևոսյան Զոհրաբի, Նավասրդյան Նունեի, Նավասարդյան Ժորայի, Մնացականյան Աշոտի, Գալստյան Անժելայի, Գալստյան Գարիկի, Համբարձումյան Ռոզայի դիմումները, որպես սոցիալապես անապահով ընտանիքներ և համայնքի վարչական բյուջեի Այլ նպաստների պահպանման ծախսերի բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 51 հոդված 4729 հատկացնել 690.0 հազար դրամ դրամական օգնություն

- Սարիբեկյան Արմինեին- 50000 դրամ
- Պետրոսյան Համասփյուռին - 50000 դրամ
- Իգնաթևոսյան Վազգենին - 50000 դրամ
- Հարությունյան Անուշակային - 60000 դրամ
- Ղազարյան Ալեքսանին -50000 դրամ
- Պետրոսյան Նորայրին - 25000 դրամ
- Սիմոնյան Ռուբիկին - 50000 դրամ
- Սանամյան Յուրիկին - 50000 դրամ
- Մաթևոսյան Զոհրաբին - 50000 դրամ
- Նավասրդյան Նունեին - 30000 դրամ
- Նավասարդյան Ժորային - 45000 դրամ
- Մնացականյան Աշոտին - 70000 դրամ
- Գալստյան Անժելային - 20000 դրամ

- Գալստյան Գարիկին - 50000 դրամ
- Համբարձումյան Ռոզային - 40000 դրամ

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

7. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

Համայնքի ղեկավար՝ **ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**